https://doi.org/10.46991/hc.2025.si1.209

The Iron Age complex of the Mastara mountain valley in the system of cultural landscape of Karmrashen Saravand

Levon Mkrtchyan
https://orcid.org/0000-0003-2221-4766
Shirak Center For NAS RA Armenological Studies, "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-reservations" State non-commercial organization.
levonultur@gmail.com

Keywords - Karmrashen Saravand, cultural landscape, bronze-iron centuries, fortress, tower.

The article is dedicated to the Mastara mountain valley, one of the zones forming the cultural landscape of the Karmrashen peninsula, where we have confirmed a number of newly discovered (left out of scientific circulation) monuments, which, according to preliminary observation, form a single complex.

The Karmrashen Peninsula extends in the southwestern parts of the Aragatsotn Marz of the Republic of Armenia and the western parts of the Armavir Marz, at the southwestern foot of the Aragats massive, between the Talin Peninsula and the Akhuryan and Araks rivers. It is rich enough in historical and cultural monuments, because it was included from different sides and was part of Shirak and Aragatsotn provinces on the one hand, bearing the influences of their cultural developments, from the Bronze-Iron Age to the Middle Ages. Based on the above, this zone has always been in the center of attention of researchers. Archaeological expeditions of different years of the Archaeological Research Laboratory of Yerevan State University have a particularly great contribution to the study of the cultural landscape of this peninsula (study: P. Avetisyan, E. Asatryan, H. Ohanyan and others).

Perhaps we are dealing with a center of local significance typical of the Iron Age (9-6th centuries BC), which, together with other similar neighboring examples (Lanjik, Tsakasar, Akunk 1, etc.) formed larger units, which are known from the Bianic inscriptions are under the name Etuinian «countries».

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 209-216.

Received: 11.12.2024
Revised: 17.12.2024
Accepted: 24.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Մաստարայի լեռնահովտի երկաթեդարյան համալիրը Կարմրաշենի սարավանդի մշակութային լանդշաֆտի համակարգում

Լևոն Մկրտչյան
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ

Հիմնաբառեր - Կարմրաշենի սարավանդ, մշակութային լանդշաֆտ, բրոնզ-երկաթե դարեր, ամրոց, աշտարակ։

Հոդվածը նվիրված է Կարմրաշենի սարավանդի մշակութային լանդշաֆտը ձևավորող գոտիներից մեկի՝ Մաստարայի լեռնահովտին, որտեղ մեր կողմից հավաստվել է նորահայտ (գիտական շրջանառությունների դուրս մնացած) մի շարք հուշարձաններ, որոնք նախնական դիտարկմամբ կազմում են մեկ միասնական համալիր։

Կարմրաշենի սարավանդը տարածվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հարավ-արևմտյան և Արմավիրի մարզի արևմտյան մասերում, Արագած լեռնազանգվածի հարավարևմտյան ստորոտին՝ Թալինի սարավանդի և Ախուրյան ու Արաքս գետերի միջև։ Այն բավականաչափ հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, քանի որ տարբեր կողմերից ներառվել և մաս է կազմել մի կողմից Շիրակ և մյուս կողմից Արագածոտն գավառներին՝ կրելով դրանց մշակութային զարգացումների ազդեցությունները՝ բրոնզ-երկաթիադարից մինչև միջնադար։ Ելնելով վերոգրյալից, այս գոտին միշտ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում։ Այս սարավանդի մշակութային լանդշաֆտի ուսումնասիրության մեջ հատկապես մեծ ավանդ ունեն Երևանի Պետական Համալսարանի Հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի տարբեր տարիների հնագիտական արշաավխմբերը (ուսումնասիրությամբ՝ Պ. Ավետիսյան, Ե. Ասատրյան, Հ. Օհանյան և այլք)։

Հավանաբար գործ ունենք երկաթե դարին բնորոշ (մ.թ.ա. 9-6-րդ դդ.), տեղական նշանակության մի կենտրոնի հետ, որը հարևան այլ նմանատիպ օրինակների հետ (Լանջիկ, Ծակասար, Ակունք 1 և այլն) կազմել է ավելի մեծ միավորներ, որոնք բիայնական արձանագրություններից հայտնի են Էթուինյան «երկրներ» անվամբ։

Комплекс железного века долины Мастара в системе культурного ландшафта плато Кармрашен

Левон Мкртчян
НАН РА Ширакский центр Арменоведческих исследований,
“Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников” государственная некоммерческая организация

Ключевые слова - плато Кармрашен, культурный ландшафт, бронзово-железный век, крепость, башня.

Статья посвящена горной долине Мастара, одной из зон формирования культурного ландшафта плато Кармрашен, где нами утвержден ряд вновь открытых памятников (вышедших из научного оборота), которые, по предварительным наблюдениям, образуют единый комплекс.

Плато Кармрашен простирается в юго-западной части Арагацотнского марза и западной части Армавирского марза Республики Армения, у юго-западного подножия Арагацского горного массива, между Талинским плато и реками Ахурян и Аракс. Он довольно богат историко-культурными памятниками, поскольку с разных сторон включался) и входил в состав, с одной стороны, Ширакской и, с другой - Арагацотнской провинций, неся на себе влияние их культурного развития, от бронзово-железного века до средневековья. Исходя из вышесказанного, эта зона всегда была в центре внимания исследователей. В изучении культурного ландшафта этого плато особенно большой вклад внесли археологические экспедиции Археологической научно-исследовательской лаборатории ЕГУ разных лет (с исследованиями П. Аветисяна, Ю. Асатряна, О. Оганяна и других).

Вероятно, мы имеем дело с характерным для железного века (9-6 вв. до н.э.) центром местного значения, который вместе с другими аналогичными образцами в окрестностях (Ланджик, Цакасар, Акунк 1 и др.) образовывал более крупные единицы, которые известные нам из биайнских надписей под названием Этуинские «страны».

* * *

Մուտք: ՀՀ Արագածոտնի մարզի Մաստարա գյուղը գտնվում է Արագածի հարավարևմտյան փեշերին ծովի մակարդակից 1750 մ. բարձրության վրա՝ կազմելով Կարմրաշենի սարահարթի մակերևույթի կարևոր ձևաբանական տարրերի՝ սելավաբեր համակարգի հեղեղատները [Հայաստանի Հանրապետության Ֆիզիկաաշխարհագրական

օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան, 68-150]: Հենց այս հեղեղատների վրա է տեղակայված նորահայտ երկաթեդարյան համալիրը, որը հավաստվել է մեր կողմից այս տարի՝ դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում: Համալիրը կազմված է ամրոցից («Լոլո կոնդ»), սրա անմիջապես արևելյան բարձունքին տեղակայված քառանկյուն աշտարակից (Մաստարա 1) և սրանցից 3,80 կմ հեռավորությամբ գտնվող մեկ այլ աշտարակատիպ շինությունից (Մաստարա 2): Սրանք իրար հետ գտնվում են տեսողական կապի մեջ՝ միջակայքում թողնելով ճանապարհների, բնակավայրերի, դամբարանների, դարավանդների և Արագածից իջնող հեղեղատներում պահպանված «ջրաբաշխական» համակարգերի մնացորդներ:

Մաստարան աչքի է ընկնում իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, ուստի պատահական չէ, որ խնդրո առարկա տարածքին վերաբերող ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված են 53 հուշարձան (20 միավոր): Սրանց գերակշիռ մասը վերաբերում է միջնադարին (քառակող կոթողներ, խաչքարեր, մատուռներ), որոնց մեջ, սակայն, իր ուրույն տեղն ունի միջնադարյան Հայաստանի հնագույն ու ամենակատարյալ կառույցներից մեկը՝ Սուրբ Հովհաննես եկեղեցին (6-րդ դ.): Ցանկում ներառված ամենավաղ թվագրվող հուշարձանը Մաստարայի դամբարանադաշտն է (ցանկում՝ մ.թ.ա. 2-1 հզ. ըստ պեղումների՝ 3-1 հզ. թվագրությամբ): Այստեղ պեղումներ է կատարել ԵՊՀ-ի հայագիտական կենտրոնի հնագիտական արշավախումբը՝ 1979 թ. (Հ. Իսրայելյանի կողմից՝ 15 դամբարան) և 1984-1990 (Պ. Ավետիսյանի կողմից՝ 40 դամբարան) թթ. [Badalyan, Avetisyan, 2007, 212-219:]:

«Լոլո կոնդ» ամրոց: Մաստարա և Ակունք գյուղերի միջև առկա են մինչև 100 մետր հարաբերական բարձրության վրա գտնվող խարամային կոներ: Այս կոներից մեկի վրա, որը տեղացիների կողմից հայտնի է որպես «Լոլո կոնդ» (1941 մ.ծ.մ.), գտնվում է մի ամրոց՝ ամրացված օվալաձև դարավանդներով (նկ. 1): Ամրոցը տեսողական կապի մեջ է Ծաղկասարի, Գառնահովտի, Ակունքի և Լանջիկի ամրոցների հետ և տեղակայված է Արագածից իջնող հեղեղատը եզերող բարձունքին՝ վերահսկելով Մաստարայի լեռնահովիտը:

Ամրոցն ուղղված է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք՝ 111 մ երկարությամբ, իսկ լայնությունը հասնում է 45 մ: Գագաթից ներքև սփռվող ամրացված դարավանդի երկարությունը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք՝ 145 մ է, իսկ լայնությունը միջնամասում՝ 70 մ է: Ի տարբերություն Հայաստանի այլ «բլուր-ամրոցների», որտեղ համակենտրոն օղակված դարավանդների և գագաթի կենտրոնական ամրոցի (միջնաբերդ՞) բարձրությունները այդքան ցայտուն չեն, այստեղ, ընդհակառակը, շատ կտրուկ է և հասնում է մոտ 20 մ. (նկ. 2): Այդպիսի իրավիճակ է հիմնականում Շիրակին

բնորոշ ամրոցներում (Զորակերտ 1, ուսումնասիրությունը՝ Լ. Մկրտչյան, Զրաձոր, ուսումնասիրությունը՝ Բ. Վարդանյան, Լ. Մկրտչյան և այլն)

Հատկապես հիշարժան է ամրոցի գագաթային հիմնական բաժանմունքի (միջնաբերդ) կառուցապատումը: Բացի այն, որ պահպանվել են բազմաթիվ շենքերի հիմքեր, սրանք նաև միմյանց հետ կապվում են նեղ երկար միջանցքներով, իսկ որոշ կառույցներ գետնափոր, կամ կիսագետնափոր են: Ամրոցի կառուցապատումները աստիճանաձև ճառագայթվում են արևելյան և հարավ-արևելյան մասերում՝ տեղանքի ամենաարևային մասերում:

Մաստարա 1 աշտարակ: Ամրոցից արևելք տարածվում է երկարուկ ու քարքարոտ մի բլրաշղթա: Այս բրրաշղթան ունի գրեթե հյուսիս-հարավ ուղղվածություն և թեպետ ժամանակի ընթացքում ենթարկվել է խաթարումների (ներկայումս այստեղ է տեղակայված ժամանակակից կապի էլեկտրահանգույցը), այնուամենայնիվ նկատելի են բլրաշղթայի ստորոտներին կառուցապատումների հետքեր: Սակայն բլրաշղթայի գրեթե կենտրոնական հատվածում՝ բարձունքին, ծովի մակարդակից. 1982 մ բարձրության վրա, դեռ բավական լավ պահպանվել են (մոտ 1,5 մ բարձրությամբ) խոշոր քարերի (մոտ 90x60 սմ չափերով) չոր շարվածքով, ուղղանկյունաձև (6,80x4,45 մ չափերով) աշտարակի հիմքեր (նկ. 3): Աշտարակը կարող էր բավական բարձր չափեր ունենալ, ինչի մասին խոսում են շրջակայքում առկա թափված քարերը: Հատկանշական է, որ աշտարակը հոծ է՝ զուրկ մուտքից, և չի նկատվում նաև աշտարակի վրա բարձրացող աստիճաններ հիշեցնող ելուստները (նկ. 4):

Հայաստանի աշտարակատիպ կառույցների մեջ «քառանկյուն» տիպի աշտարակները երեք տեսակ են լինում՝ խցով, սին և հոծ (ուսումնասիրությունը՝ Լ. Մկրտչյանի): Վերջինիս շարքին է դասվում նաև Մաստարա 1 աշտարակը: Ներկայումս աշտարակատիպ կառույցների մեր ուսումնասիրությամբ հավաստվել է մեկ տասնյակ նմանատիպ կառույցներ, ինչպես մոտակա Արագածավան, այնպես էլ ՀՀ Արագածոտնի և Կոտայքի բարձրադիր վայրերում: Հոծ աշտարակների մասին մեզ նոր պատկերացումներ տվեցին Արմավիրի մարզի Խանջյան հնավայրի հայ-գերմանական միացյալ արշավախմբի (արշավախմբի համաղեկավարներ՝ Լ. Մկրտչյան, Ս. Առնոլդ) պեղումներով բացված քառանկյուն հոծ աշտարակը: Այստեղ հատկանշական է աշտարակի մոտ վառված փայտածուխի առատությունը [Davtyan, Mkrtchyan, Arnhold, 2024, 57-72] ինչը հավանաբար կարող էր լինել աշտարակի վրա բարձրացող տախտակամածը, որն այրվել է Խանջյանի ամրոցի գրավման ժամանակ, որի կենտրոնում և ամենաբարձր կետում տեղադրված էր աշտարակը: Հավանաբար մյուս քառանկյուն հոծ աշտարակները նույնպես ունեցել են տախտակամածեր:

Մաստարա 1 աշտարակը հստակ տեսողական կապի մեջ է «Լոլո կոնդ» ամրոցի հետ և ունենալով նույնատիպ շինտեխնիկա՝ պետք է դրա հետ միասին կազմեր մեկ համալիր (նկ. 5)։

Մաստարա 2: Ամրոցից 3,88 կմ հարավ-արևմուտք, գրեթե հյուսիս-հարավ ձգվող լեռնային բարձունքի գագաթին առկա են մի շինության ավերակներ, որոնք առայժմ զուգահեռներ չունեն մեր հավաստանշած հուշարձանների շարքում (նկ. 6)։ Կառույցն ամբողջությամբ ծածկված է հաստ քարակույտով, ինչը խոսում է դրա զանգվածեղ լինելու մասին։ Այնուամենայնիվ, քարակույտերի մեջ նշմարվում են կառույցի հիմքի լայն պատերը, որոնք տեղ-տեղ ընդհուպ հասնում են 3,40 մ չափերի։ Այդ պատերը արևելք-արևմուտքում ձգվում են մինչև 21 մ, իսկ հյուսիս-հարավում՝ մոտ 15 մ՝ առաջացնելով ոչ այնքան կանոնիկ հատակագծով ուղղանկյունաձև շինություն, որի ներսի պատերի անկյունները կլորացող են։ Ներսույթում կառույցը ջլատվում երկու՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղվածությամբ, զուգահեռ դրված անկանոն հատակագծով սենյակների (խցեր՞), որոնք իրարից բաժանվում են մոտ չորս մետր հաստությամբ պատով, և կապվում՝ մոտ 2 մետրանոց նեղ միջանցքով։ Սրանցից արևմտյանը (4,38 x5, 95 մ), որը բավական աղավաղված է, հավանաբար նաև վերջերս էլ՝ ենթարկվել գանձախույզների ավերումներին, իսկ արևելյանի (4,35x5,45) դեպքում ավելի հստակ են պատերի երեսների շարքերը։ Սակայն կառույցի ամենանշանավոր հատվածը, թերևս, մուտքն է։ Այն հարավային կողմից է, որտեղ կառույցին մոտենում է մոտ 15 մ երկարությամբ և մոտ 1,5 մ լայնությամբ զուգահեռ դրված շարքով միջանցք։

Վերջաբան: Թեպետ Մաստարայի հուշարձանախումբը նորահայտ է և չի ենթարկվել առավել խորը ուսումնասիրության, այնուամենայնիվ, հավաստված առկա տվյալները թույլ են տալիս առանձնացնել մի քանի հիմնախնդիր և անել նախնական որոշ ենթադրություններ հուշարձանախմբի նշանակության համար։

Այսպիսով՝

- հուշարձանախմբի ձևավորումը կապված է կոնկրետ բնական պայմանների հետ (բնական լանդշաֆտ), այն տեղակայված է Կարմրաշենի սարավանդում, որը արհեստական ոռոգման պայմաններում հնարավորություն կտար զբաղվելու այգեգործությամբ ու պտղաբուծությամբ։ Այստեղ, ամրոցի լանջերի մոտ, Արագածից իջնող հեղեղատներում պահպանված են «ջրաբաշխական» համակարգերի մնացորդներ։
- ամրոցի զբաղեցրած կենտրոնական դիրքը և երկու աշտարակատիպ կառույցների առկայությունը կարող են խոսել դրանց ինչ որ տեղական հիերարխիկ նշանակության մասին։ Նման միավորումները բնականաբար պետք է ունենային

ծիսապաշտամունքային օբյեկտներ, որոնք սովորաբար կենտրոնական դիրք են զբաղեցնում համալիրներում:

- ծիսապաշտամունքային օբյեկտներից մեկը՝ Մաստարա 2-ը, հավանաբար ուներ «տարածաշրջանային» նշանակություն, ինչի մասին խոսում են կառույցի մոնումենտալությունը և եզակի ձևը:

Այսպիսով՝ գործ ունենք երկաթեդարյան մի նոր համալիրի հետ, որի հիմնադրման և ճշգրիտ գործառույթների հետ կան դեռևս շատ խնդիրներ, որոնց պատասխանը կարող են տալ միայն կանոնավոր պեղումները:

Նկար 1. Օրթոֆոտոպլան, Լոլո կոնդ ամրոցը, կազմեց Լ. Մկրտչյանը

Նկար 2. Օդալուսանկար, Լոլո Կոնդ ամրոցը հյուսիս-արևմուտքից, լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի

Նկար 3. Օրթոֆոտոպլան Մաստարա 1 աշտարակ, կազմեց Լ. Մկրտչյանը



Նկար 4. Մաստա 1 տեղահանույթ աշտարակ, կազմեց Լ. Մկրտչյանը

Նկար 5. Մաստարա 1 աշտարակը և ամրոցը, լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի



Նկար 6. Մաստարա 2 օրթոֆոտոպլան, կազմեց Լ. Մկրտչյանը

Նկար 7. Մաստարա 2 կառույցի մուտքը, լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի

Գրականության ցանկ

Hayastani Hanrapetut'yan Fizikaashkharhagrakan obyektneri hamarrot teghekatu-barraran, Yerevan, «Geodeziayi yev k'artezagrut'yan kentron POAK», 2007, ej 68 -150 ej: **(in Armenian)**

Badalyan R., Avetisyan P., Bronze and Early Iron Age Arhcaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region, BAR international Series 1697, 2007, p. 319.

Davtyan R., Mkrtchyan L., Arnhold S., 2024, Erste archäologische Untersuchungen in Khanjyan (Armenien), Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft 156, 57-72.